ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1112-Ա « 22 » մարտի 2024 թ.

«ԱՍՖԱԼՏԱԳՈՐԾ» ՍՊԸ-ԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել «Ասֆալտագործ» ՍՊԸ-ի տնօրեն Հմայակ Խանդոյանի հ.Դ-89742 դիմումը՝ Երևանի քաղաքապետի 2023 թվականի փետրվարի 14-ի «Շիրակի փողոց հ.47/12 հասցեում գտնվող հողամասի սահմանները ճշտելու, ուղղակի վաճառքի միջոցով լրացուցիչ հողամաս օտարելու, հասցե տրամադրելու և Երևանի քաղաքապետի 2021 թվականի դեկտեմբերի 17-ի հ.4500 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» հ.397-Ա որոշման 12-րդ կետով շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքի վճարման սահմանված 15-օրյա ժամկետը բաց թողնելու մասին:

Երևանի քաղաքապետի 2023 թվականի փետրվարի 14-ի հ.397-Ա որոշման 12-րդ կետը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով համարվել է ուժը կորցրած՝ Երևանի քաղաքապետի 2023 թվականի փետրվարի 14-ի հ.397-Ա որոշման 5-րդ և 8-րդ կետերով նախատեսված գումարը նույն որոշման 12-րդ կետում նշված ժամկետում չվճարելու փաստական հանգամանքի հիման վրա:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքով և «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 46-րդ կետով, ՀՀ կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի հ.1023-Ն որոշմամբ, հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի հ.550-Ն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով, Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի հ.50-Ն որոշման հավելվածով, հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի 2023 թվականի փետրվարի 14-ի հ.397-Ա որոշումը.

1. Շիրակի փողոցի հ.47/12 հասցեում գտնվող, սեփականության իրավունքով «Ասֆալտագործ» ՍՊԸ-ին պատկանող հողամասին կից՝ 0.1135հա մակերեսով հողամասը, Երևան համայնքի անվամբ գրանցելուց հետո, որպես ընդլայնում, կառուցապատման նպատակով, ուղղակի վաճառքի միջոցով օտարել (վաճառել) ընկերությանը՝ որոշման ընդունման պահին գործող տարածագնահատման 11-րդ գոտու շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքով, որը կազմում է 5.041.670 (հինգ միլիոն քառասունմեկ հազար վեց հարյուր յոթանասուն) ՀՀ դրամ և փոխանցել Երևանի քաղաքապետարանի 900015211320 հաշվեհամարին (հողի օտարումից եկամուտներ):

2. «Շիրակի փողոց, հ.47/12» և «Շիրակի փողոց, հ.47/17» հասցեներում գտնվող գույքերին, որպես մեկ գույքային միավորի, տրամադրել «Շիրակի փողոց, հ.47/12» հասցեն:

3.Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետին՝ որոշման հիման վրա տրամադրված անշարժ գույքի հասցեի վերաբերյալ տեղեկատվությունը 3 աշխատանքային օրվա ընթացքում առաքել կադաստրի կոմիտեի և ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի համապատասխան բաժնին, Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարին:

4. Սահմանել, որ Շիրակի փողոցի հ.47/12 հասցեում գտնվող հողամասի փաստացի մակերեսը կազմում է 5.3360հա, որից 0.1515հա մակերեսն ուղղակի վաճառքի միջոցով օտարել (վաճառել) «Ասֆալտագործ» ՍՊԸ-ին՝ որոշման ընդունման պահին գործող տարածագնահատման 11-րդ գոտու շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքով, որը կազմում է 6.729.630 (վեց միլիոն յոթ հարյուր քսանինը հազար վեց հարյուր երեսուն) ՀՀ դրամ և փոխանցել Երևանի քաղաքապետարանի 900015211320 հաշվեհամարին (հողի օտարումից եկամուտներ):

5.Լիազորել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետին՝

1) ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ Երևան համայնքի անվամբ պետական գրանցման աշխատանքները.

2) հողամասի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքի վճարումը հավաստող փաստաթուղթը ներկայացնելուց և Երևան համայնքի անվամբ իրավունքի պետական գրանցում կատարելուց հետո, երեք աշխատանքային օրվա ընթացքում, Երևանի քաղաքապետի անունից, «Ասֆալտագործ» ՍՊԸ-ի հետ կնքել 0.1135հա մակերեսով հողամասի առուվաճառքի պայմանագիր.

3) 0.1515 հա մակերեսով հողամասի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքի վճարումը հավաստող փաստաթուղթը ներկայացնելուց հետո, երեք աշխատանքային օրվա ընթացքում, Երևանի քաղաքապետի անունից, «Ասֆալտագործ» ՍՊԸ-ի հետ կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր:

6. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 15-ի հ.2330-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծի համաձայն՝ Շիրակի փողոցի հ.47/12 հասցեի՝ 5.3360հա և կից՝ 0.1135հա մակերեսներով հողամասերի նպատակային նշանակությունները /կատեգորիան/ սահմանել արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, իսկ գործառնական նշանակությունները /օգտագործման նպատակը/՝ արդյունաբերական օբյեկտների:

7. Սահմանել, որ սույն որոշման ընդունման պահից հողամասերի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքները հողամասերը ձեռք բերողի կողմից 15-օրյա ժամկետում չվճարելու դեպքում՝ սույն որոշումը և Երևանի քաղաքապետի 2023 թվականի փետրվարի 14-ի հ.397-Ա որոշումը համարվում են ուժը կորցրած:

8. Ընդունել ի գիտություն, որ հողամասերի առուվաճառքի պայմանագրերը ենթակա են նոտարական վավերացման, իսկ պայմանագրերից ծագող իրավունքները՝ պետական գրանցման կադաստրի կոմիտեում:

9. Ընդունել ի գիտություն, որ սույն որոշումից բխող բոլոր գույքային իրավունքների պետական գրանցման, հողամասի հատակագծերի հաստատման, պայմանագրերի նոտարական վավերացման, ինչպես նաև օրենսդրությամբ նախատեսված միասնական տեղեկանքներ ստանալու համար ծախսերը և այլ անհրաժեշտ վճարումներն իրականացվում են «Ասֆալտագործ» ՍՊԸ-ի միջոցների հաշվին:

10. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

11. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության, անշարժ գույքի կառավարման վարչությունների պետերի վրա:

12. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Ա.Փամբուխչյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ